ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«17» մայիս 2024թ. **ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք**

Հեռ. (+37412) 27-27-27

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«Մ.Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Կիրակոսյան,

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 12-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-4» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 3-րդ, 12-րդ, 18-րդ, 19-րդ, 32-րդ և 48-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն: Սակայն, ըստ Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայության կողմից ստացած 2024 թվականի հուլիսի 4-ի Ե/1616-24 գրության՝ 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հադիսացել Լևոն Ստեփանի Կիրակոսյանը, ով հանդիսանում է փոխկապակցված անձ «Մաան» ՍՊ ընկերության համար, որի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Լևոն Ստեփանի Կիրակոսյանը 2022 թվականի հուլիսի 8-ից սկսած՝ համաձայն պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանի:

Եթե մասնակիցը կամ վերջինիս հետ փոխկապակցված կազմակերպություն-ները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուց հետո մասնակցել են գնման գործընթացին և վերջինիս հետ կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը միակողմանի լուծվում են և ձեռնարկվում են միջոցներ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Բացի այդ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք 5 բանկային օրվա ընթացքում «Այ Դի բանկ» ՓԲԸ-ի **11813017106900-ի** վրա փոխանցել որակավորման ապահովման՝ **77 250 ՀՀ դրամը** և պայմանագրի ապահովման **51 500 ՀՀ դրամ գումարները**, ընդամենը՝ **128 750 ՀՀ դրամ** և վճարման կտրոնները ներկայացնել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by NAZINYAN SUREN 3103820607
Дата: 2024.07.17 16:01:45 AMT

Ս. ՆԱԶԻՆՅԱՆ